ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ

XIII դարի վերջի և XIV դարի առաջին կեսի հայ մշակույթի խոշորագույն կենտրոններից էր Գլաձորի համալսարանը։

Գլաձորը (անվանվել է նաև Դայլաձոր, Դայլեձոր, Դայլիձոր կամ թե Ադրերց վանք), որը բառացի նշանակում է «Դայլի ձոր», գտնվել է Խաղբակյան կամ Պռոշյան իշխաններին պատկանած Վայոց ձորում (այժմ Հայկական ՍՍՀ Եղեգնաձորի շրջան)։

Գլաձորի համալսարանի տեղադրությունը հետազոտողների համար մնացել է անհայտ։ Հայտնարկված հետքերը ոչ մի կերպ չեն համապատասխանում այդ համալսարանի հոչակին։ Արդարացի է Դարեղին Հովսեփյանը, երբ գրում է, թե այն ավերակները, որոնք համարվում են Գլաձորի հետքերը, շատ աննշան են և ոչ մի ընդհանուր բան չունեն նրա հետ։ Հասարակ, չչկված քարերով կառուցված մի եկեղեցու ավերակներ են դրանք և ոչ թե մնացորդները մի այնպիսի մեծ վանքի, ինչպիսին եղել է Գլաձորը։ Մեծ վանքը սովորաբար բաղկացած է լինում եկեղեցիներից, դպրոցից, մատենադարանից, սեղանատնից, բազմաթիվ կացարաններից և մի շարք լրացուցիչ կառուցվածքներից։ Մինչդեռ Գլաձորի շրջապատում չկան վանքի ամբողջականության մնացորդներ։ Կասկածանքն ավելի է հաստատվում, երբ հարց է առաջանում, թե ինչու նույն ժամանակաշրջանում կամ նույնիսկ դրանից առաջ կառուցված մյուս եկեղեցիների ու վանքերի մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը, ըստ որում ոչ վատ վիճակում, իսկ Գլաձորից չի մնացել «բրեէ հետք։

Դեռևս իր ժամանակին Ղ. Ալիշանը նկատել է, որ Գլաձորը, ըստ երևույթին, ունեցել է այլ անվանում։ Այդ կասկածանքը հիմնված է Մխիթար Սասնեցու մի վկայության վրա, որտեղ ասված է. «Ի վանսն որ այժմ ասի Գլաձոր»[2], Մի ուրիշ գրչի մոտ, 1291 թ. ձեռագրում, կարդում ենք. «Ի մենաստանս որ կոչի Ադրերց վանս և մականուն Գլաձոր»։ Այստեղից էլ բխում է Ղ. Ալիշանի ենթադրությունը, թե Գլաձորի վանքը սկզբնապես կոչվել է Ադրերց վանք[3]։ Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ Գլաձորին ժամանակակից Ստեփանոս Օրբելյանը ոչ մի տեղ չի հիշում այդ վանքի Գլաձոր կամ Ադրերց վանք անվանումները[4]։

Ելնելով ուղղակի և անուղղակի տվյալներից, մենք հանգեցինք այն եզրակացության, որ միջնադարյան Հայաստանի և հենց իրեն՝ Գլաձորի համալսարանի պատմության այդքան կարևոր հարցում խորապես իրավացի է գիտնական-ազգագրագետ Օրվանդ Լալայանը։ Նրա «Վայոց ձոր կամ Դարալագյազ» աշխատության մեջ ասվում է, որ Օրթաքենդ գյուղից (այժմ՝ Գլաձոր) դեպի հյուսիս-արևելք գտնվում է XIII—XIV դարերում հայտնի Դայլաձոր կամ Գլաձոր վանքը, որը հետագայում սկսեց անվանվել Լարա-վանք[5]։ Այնուհետև Ե. Լալայանի այդ նույն աշխատության մեջ նշվում է, որ Ղարա-վանքը միևնույն Թանատի վանքն է, որը կառուցվել է XIII դարում և որտեղ ամփոփված է եղել 735 թ. Մոդև գյուղում նահատակված Ստեփանոս եպիսկոպոսի մարմինը[6]։

Թե ինչ սկզբնաղբյուրների վրա է հենվել Ե. Լալայանը՝ նույնացնելով Գլաձորը Լարա-վանքի հետ, այնուամենայնիվ, մնում է անհայտ։ Ճիշտ է, Օրբելյանի մոտ հիշատակված է, որ Ստե-

---

1 Տե՛ս Դարեղին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մասն երկրորդ, Երուսաղեմ, 1944, էջ 189։

2 Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 130։

3 Նույն տեղում։

4 Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910։

5 Ե. Լալայան, Շարուր-Դարալագյազի գավառ, Վայոց ձոր կամ Դարալագյազ, «Ազգագրական հանդես», 12-րդ գիրք, Թիֆլիս, էջ 271։

6 Նույն տեղում, էջ 267։

փանոս Սյունեցի եպիսկոպոսը գոհվել է մի կնոջ ձեռքով և թաղվել Թանատի վանքում[7], սակայն դա բավական չէ Թանատը Գլաձորի հետ նույնացնելու համար։ Բայց գոյություն ունի մի վկայություն, որի շնորհիվ հնարավոր է որոշել Գլաձորի տեղադրությունը։ Այն պահպանվել է 1283—1284 թթ. մի հավաքածուի հիշատակարանում, որտեղ գրիչ Մատթեոս Կիլիկեցին գրում է։

...Եկեալ յայս զաւառի,
Որում անուն Վայ ձոր,
Հուպ ի շիրիմն Սիւնեցի,
Ի Աղբերց վանս մենաստանի,
Յերկրորդ Արլենս պանծալի,
Առ ոտս հաւր մեր Ներսէսի,
Սուս բարունաց վարդապետի[8].
Հասեալ ի ծայրս իմաստ բանի...[9]

Բերված վկայությունից պարզ է, որ խոսքը վերաբերում է Աղբերց վանքին, այսինքն Գլաձորին՝ «երկրորդ Աթենք պանծալի»[10], որի եկեղեցում էլ գտնվում է նահատակված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի գերեզմանը։ Այդ պատճառով էլ Գլաձորը հաճախ կոչվել է նաև «վանք Գլաձոր Ս. Ստեփանոսի»[11]։ Հիշատակված է նաև Գլաձորի համալսարանի դասապետ (ռեկտոր), սարունաց վարդապետ Ներսեսի անունը։ Այսպիսով, ստացվում է, որ Թանատ (Ղարա-վանք)—Աղբերց վանքը նույն Գլաձորն է։ Եվ իրոք, ոչ մի կասկած լինել չի կարող, որ Թանատի վանքը հենց Գլաձորն է։ Համեմատելով Թանատի վանքի սահմանները որոշող տվյալները, կարելի է տեսնել, որ նույն այդ տվյալները վերաբերում են և Գլաձորին։ Այսպես, Ղ. Ալիշանի մոտ ասվում է, որ Գլաձորը սահմանակից էր Եկեղյաց ձորին[12]։ Ըստ Օրբելյանի, ինչպես և Գարեգին Հովսեփյանի, Թանատ-Ղարա-վանքը նույնպես գտնվում է Եկեղյաց ձորին կից[13]։

Կա նաև մի ուրիշ, ոչ պակաս հետաքրքիր վկայություն։ Գարեգին Հովսեփյանը խոսելով Գլաձորի մասին, ցույց է տալիս, որ այն գտնվում է Արկղունիքի Պռոշ իշխանի դաստակերտից («դարբաս») ոչ հեռու[14], իսկ ըստ Ե. Լալայանի այդ դաստակերտի մնացորդները գտնվում են Բաշքենդ գյուղի ծայրամասում (որը նույնացվում է Արկղունիքի հետ)[15], այսինքն, դարձյալ Թանատի վանքից ոչ հեռու[16]։

Թանատի վանքի ծաղկման ժամանակաշրջանը, նրա բուռն գործունեությունը, որի մասին մեզ պատմում են այդ վանքի վիմագիր արձանագրությունները, նույնպես համընկնում են Գլաձորի համալսարանի գոյության ժամանակաշրջանին[17]։

Այժմ, երբ պարզ է, որ Գլաձորը և Թանատը, ըստ էության, միևնույն վանքի տարբեր անվանումներն են, մեզ զարմանալի չի թվում այն տարակուսանքը, որ արտահայտել է Գարեգին

---

7 Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական», գլ. ԼԱ և ԿՐ։

8 «Բարունաց վարդապետ» կամ հաճախ՝ «վարդապետաց վարդապետ» սովորաբար կոչվել են այն ժամանակվա ուսումնական հաստատության ղեկավարները։

9 Հ. Հակոբոս Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 1039։ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 130։ Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 205—206։

10 Այդպես էին անվանում ժամանակակիցները Գլաձորի համալսարանը։

11 Այդ եպիսկոպոսի անվամբ կոչվում էր Թանատի վանքը, ավելի ճիշտ վանքի եկեղեցին՝ «յարկ սրբոյն Ստեփանոսի», «Ս. Ստեփանոսի գերեզման» (տե՛ս Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխ., մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 119)։

12 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 130։

13 «Պատմութիւն նահանգին Սիսական», գլ. Ա, էջ 259։ Գարեգին Հովսեփյան, նույն տեղում, էջ 115։

14 Նույն տեղում, մասն երկրորդ էջ 196։

15 Նույն տեղում, մասն առաջին, էջ 115։

16 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 270։

17 Տե՛ս «Материалы по археологии Кавказа», выпуск XIII, под редакцией П. С. Уваровой и Х. И. Кучук-Иоаннесова, Москва, 1916, էջ 134։ Գարեգին Հովսեփյան նույն տեղում, էջ 175։

Հովսեփյանը «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» աշխատության երկրորդ մասում, Թանատի վանքին նվիրված հատուկ գլխում, գրելով.

«Հավանական չենք համարում, սակայն, որ ԺԴ դարի կեսերից մինչև ԺԴ-ի կեսերը ս.ձեռագրություններով հարուստ մի վանք, ուր եղել են և առաջնորդ «վարդապետ»-ներ, այդքան ամուլ լիներ ձեռագրական արվեստի կողմից»[18], եվ իրոք, մեզ չեն հասել ձեռագրեր, բացառությամբ երկու-երեքի, որոնց մեջ նշված լինի, թե նրանք գրվել են Թանատի վանքում։ Եվ դա հասկանալի է, քանի որ այդ վանքի բազմաթիվ ձեռագրերը վավերացված են հենց համալսարանի՝ Գլաձորի անվամբ։

Այսպիսով, կարելի է ասել, որ այժմ մեզ հայտնի Թանատի վանքը XIII—XIV դարերում, համալսարանի գոյության ժամանակաշրջանում (նաև հետագայում) հայտնի է եղել Գլաձոր կամ Աղրերց վանք անուններով։ Մենք հակված ենք այն կարծիքին, որ Գլաձորի հնագույն և հիմնական անվանումը եղել է ոչ թե Աղրերց վանք, ինչպես ենթադրել է Ղ. Ալիշանը, այլ Թանատի վանք։ Թանատի վանքին կից, դեռ մինչև համալսարանի հիմնադրումը, եղել է կրոնավորների միաբանություն, ծաղկել է հոգևոր մշակութային կյանքը։ Վանքը հանդիսացել է ոչ պակաս հայտնի հոգևոր կենտրոն և իր եղբայրության կողմից տվել է մի գիտնական, որին ժամանակակիցները անվանել են «անհաղթ փիլիսոփա»[19]։ Համալսարանն էլ իր նոր՝ Գլաձոր անվանումն ստացավ Ներսես Մշեցու վարդապետության օրոք։ Այդ անվանումը, մեր կարծիքով, կապված չէ միայն Գլաձոր տեղանքի հետ, որից ոչ հեռու գտնվում է Թանատի վանքը։ Այն, ինչպես երևում է, ծագում է Տարոնում[20] գտնվող Մուշի Ս. Առաքելոց վանքին կից միենույն անունը կրող դպրոցից, որտեղ Ներսես Մշեցին ստացել է իր սկզբնական կրթությունը[21]։ Այլ կերպ ասած, համալսարանի անվանումը բերվել է Ներսես վարդապետի հետ, նրա հայրենի Տարոնից։

Համալսարանի արագ աճը, շատ հնարավոր է, ստիպանարար ամրապնդեց Գլաձորի առաջատար դիրքը Թանատի վանքում, որը և, ինչպես երևում է, արտահայտվեց նրանով, որ Գլաձոր անունը տարածվեց նաև ամբողջ Թանատի վանքի վրա։

Թանատի վանքը, որի անվան տակ այդքան երկար ժամանակ «թաքնված էր» Գլաձորի հնագույն համալսարանը, իր ժամանակին հանդիսացել է երկրի խոշորագույն մշակութային կենտրոններից մեկը[22]։

Այդ մենաստանը իր Ղարա-վանք անվանումն ստացել է բավականին ուշ, XIX դարում, ազգաբնակչության կողմից, և բառացի թարգմանությամբ նշանակում է «Սև վանք»։ Գարեգին Հովսեփյանը այդ անվանումը չի կապում եկեղեցու քարի մուգ գույնի հետ, որը ժամանակի ընթացքում բոլորովին սև է դարձել, ինչպես այդ անում են Ղ. Ալիշանը, Ե. Լալայանը և ուրիշները[23]։ Գարեգին Հովսեփյանի կարծիքով Ղարա-վանքը Քարեվանք (այսինքն քարից կառուցված վանք) հին անվանման աղավաղումն է[24]։ Այս կարծիքը արդարացման որոշ հիմքեր ունի, քանի որ նման անվանման հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ[25], որի վրա էլ հենվում է Գարեգին արքեպիսկոպոսը։

---

18 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Նշվ. աշխ., մասն երկրորդ, էջ 175։

19 «Փիլիսոփա» բառը հայերի մոտ, միջնադարում, իր հիմնական իմաստից բացի կարող էր նշանակել նաև երգիչ, երաժիշտ (տե՛ս Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղբակյանք կամ Պռոշյանք, մասն երկրորդ, էջ 159)։

20 Այդ մասին Հ. Ներսես Սարգիսյանի «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս» աշխատության մեջ (Վենետիկ. 1864, էջ 236) կարդում ենք. «Մենաստան Առաքելոց կոչի և Գլաձորոյ վանք, թերևս վասն խորանգունդ ձորոյն որ ի յաչմէ մենաստանին»։

21 Ղ. Ա լ ի շ ա ն, Նշվ. աշխ., էջ 131։

22 Տեղին է նշել, որ մի շարք հետազոտողների, սկսած Ղ. Ալիշանից, շփոթեցնում է նույնանուն մի վանք ((Թանատ), որը գտնվել է Օրբելյան իշխանների տերիտորիայի վրա, Տաթևից մի քիչ հյուսիս, որը և Ստեփանոս Օրբելյան պատմիչի կողմից եկեղեցիների ու վանքերի թվարկման մեջ հիշվում է առաջիններից մեկը Տաթևի վանքից հետո։ Օրբելյանն իր դրքի մեջ վանքերի Թանատի վանքը հիշատակում է Հերմոն վանքից հետո (տե՛ս նրա «Պատմութիւն Նահանգին Սիսական», գլ. ԿԲ, էջ 338, 340։ Ղ. Ա լ ի շ ա ն, Նշվ. աշխ., էջ 119։ Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն. Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ 2-րդ, Երևան, 1952, էջ 145 և ուրիշներ)։

23 Ղ. Ա լ ի շ ա ն, Նշվ. աշխ., էջ 119։ Ե. Լ ա լ ա յ ա ն, Նշվ. աշխ., էջ 267։ «Материалы по археологии Кавказа», выпуск XIII, էջ 125 և ուրիշներ։

24 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Նշվ. աշխ., մասն առաջին, էջ 115։

25 «Պատմութիւն Նահանգին Սիսական», գլ. Ծ, էջ 259։

Թանատի վանքը հիմնադրվել է VII—VIII դարերում։ Այդ ժամանակվա վանքից ոչինչ չի պահպանվել։ Այժմ նրա տեղում միայն հետքեր ու մնացորդներ կան մի եկեղեցու, որն իրը կառուցվել է 1273 թ. Պռոշ իշխանի և նրա որդիների կողմից, որպես մենաստան, Ս. Ստեփանոսի և իրենց տոհմապետ Պռոշ իշխանի հիշատակը հավերժացնելու համար, իսկ եկեղեցուն կցված մատուռը (հյուսիսային կողմից) թվագրված է 1279 թ.[26]։ Եղել է նաև մի ուրիշ, երրորդ կառուցվածք հարավային կողմից, որից մնացել են միայն աննշան հետքեր[27]։ Մեր կարծիքով, եկեղեցին կառուցված է եղել ավելի վաղ, 1250—1260 թթ.[28]։

Չիմանալով Գլաձորի ճիշտ տեղադրությունը, հնարավոր չէ որոշել նաև համալսարանի նկատմամբ Պռոշյան իշխանների ունեցած հովանավորության բնույթը[29]։ Մի շարք ձեռագրերից հայտնի է, որ Պռոշյան իշխանները եղել են Գլաձորի համալսարանի հովանավորները, իսկ 1328 թ. մի ձեռագրի հիշատակարանում Պռոշյանները անվանված են «տէր և իշխեցող սուրբ մենարանիս և տանս դպրոցական ժողովելոց»[30]։

Անկասկած, Թանատի վանքը և Գլաձորի համալսարանը տնտեսական մեծ օգնություն են ստացել ինչպես իրենց անմիջական հովանավորներից, այնպես և այլ անձնավորություններից։ Չէ՞ որ համալսարանը առանց նյութական օգնության չէր կարող պահել այդքան մեծ թվով սաներ։ Եվ իրոք, ինչպես երևում է Ս. Ստեփանոսի եկեղեցու և մատուռի պատերին եղած արձանագրություններից[31], Թանատ-Գլաձոր վանքը ուներ ընդարձակ հողային տարածություններ։ Նվիրաբերողները հանդիսանում էին գլխավորապես Պռոշյան տոհմի անդամները, նշանավոր Պռոշ իշխանի որդիներն ու թոռները։ Բացի Պռոշյաններից նվիրաբերում էին նաև Օրբելյանները և ուրիշները։ Վանքի օգտին կատարված նվիրատվությունը, ինչպես երևում է արձանագրություններից, բավական մեծ է եղել։ Թանատ-Գլաձորի վանքին, ինչպես սովորաբար խոշոր վանքերին, հատկապես մոնղոլական տիրապետության ժամանակ, նվիրվել են վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ, կալվածներ, ամառանոցներ և այլն։ Այդ նվիրատվություններից բացի վանքը ապահովվում էր դրամով (ոսկով)։ Տաճարի սպասավորները դրա փոխարեն պարտավոր էին նվիրատուների համար պատարագ մատուցել։

Հողերի շահագործումն ու դրամական նվերները, հավանաբար, ապահովել են համալսարանի բազմաթիվ սաների ու վանքի միաբանության ծախսերը։

Գլաձորի ճիշտ տեղադրությունը պարզելուց հետո, շնորհիվ Թանատի վանքի վիմագիր ճոխ ու առատ արձանագրությունների, մեր առաջ բացվում է այդ նշանավոր մշակութային-հոգևոր կենտրոնի տնտեսական կյանքի պատկերը։ Գլաձորի համալսարանը, անկասկած, պետք է դրսևի հայ ժողովրդի անցյալի դպրոցական կյանքը հետազոտողների ուշադրությունը։

Գլաձորի համալսարանի գործունեությունը պայմանավորված էր հայ ժողովրդի մշակույթի բնաբուրությունը պահպանելու և հետագա զարգացումն ապահովելու պատմական անհրաժեշտությամբ։

---

26 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ա ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., մասն առաջին, էջ 118։

27 Նույն տեղում, էջ 124։

28 Ի միջի այլոց եկեղեցու թվագրման հարցը կարոտ է մանրազնին ստուգման, որովհետև եղած տեղեկությունները բացահայտ հակասական են։ Եթե վանքը կառուցված լիներ 1273 թ., ինչո՞վ բացատրել ապա նրա պատերին գտնվող ավելի վաղ շրջանի արձանագրությունները, որոնք գալիս են 1251 թ. դեռևս։ Այդ արձանագրություններն էլ, մեր կարծիքով, իրենց բնույթով հաստատում են, որ նրանք ոչ մի կերպ չեն կարող գրված լինել հետագա շրջանում։ Այդ պատճառով էլ մենք ճիշտ չենք համարում մի քարք հեղինակների պնդումները այն մասին, թե Ս. Ստեփանոսի եկեղեցին կառուցված է եղել 1273 թ. (տե՛ս Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություններ, «Արարատ» ամսագիր, 1889, փետրվար, էջ 102։ «Материалы по археологии Кавказа», выпуск XIII, էջ 126։ Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ա ն ի ս յ ա ն, նույն տեղում, էջ 117 և հտ.)։

29 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ա ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., մասն երկրորդ, էջ 196։

30 Նույն տեղում, էջ 197։ Տե՛ս և մասն առաջին, էջ 199—200 և մասն երրորդ, հավելված Բ, 24, ինչպես և Ղ. Ա յ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 133։

31 Ղ. Ա յ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 90—205 («Վայոց կամ Եղեգեաց ձոր»)։ Ն. Լ ա լ ա յ ա ն, Վայոց ձոր (նշանավոր վանքեր), «Ազգագրական հանդես», 26-րդ գիրք։ Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ա ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., մասն երրորդ, «Материалы по археологии Кавказа», выпуск XIII, և ուրիշներ։